ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ 4
ԲԱՆԿԸ 8
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 10
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ 13
ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ 14
Վարկային գործիքներ և Վարկային պորտֆել 14
Կորպորատիվ, այդ թվում ՓՄՁ վարկավորում 17
Նախագծային ֆինանսավորում 18
Անհատական վարկավորում 19
Առևտրի ֆինանսավորում և Ֆակտորինգ 19
Վարկային ռիսկի կառավարում 21
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 23
Արժեթղթերով գործառնություններ և Արժեթղթերի պորտֆել 23
Ներդրումային ծառայություններ 25
Արժութային և ոսկով գործառնություններ 25
ՖԻՆԱՆՍՆԵՐ 26
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ 28
Ավանդների ներգրավում 28
Համագործակցություն ֆինանսական կազմակերպությունների հետ 29
Սեփական պարտատոմսերի թողարկում 32
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 34
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 38
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 40
ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 41
ՄԱՐԴԻԿ 44
ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ 46
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ 47
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 49
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 50
ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ 62
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 62
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 64

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ հաճախորդներ, գործընկերներ, աշխատակիցներ և բաժնետերեր,

2022 թվականին մենք շարունակել ենք Բանկի առջև դրված նպատակների իրագործումն ու հաղթահարել ենք բոլոր հիմնական խոչընդոտները:

Հավատարիմ մնալով մեր ռազմավարությանը՝ մշտապես զարգացնում ենք համագործակցության ուղիները՝ հաճախորդներին առաջարկելով ֆինանսները կառավարելու ճկուն և հարմարավետ գործիքների փաթեթ:

ՀՀ տնտեսությունը 2022թ-ին վերականգնեց աճի միտումները, սակայն տնտեսությունում գրանցվել է գնաճի բարձր տեմպ, որի ուղղությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից վարվել է խիստ դրամավարկային քաղաքականություն: Արդյունքում, վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2022թ-ի ընթացքում ցուցաբերել է աճի միտում, մասնավորապես՝ 2022թ-ի սկզբին այն կազմել է 7.75%, իսկ տարվա ընթացքում ԿԲ-ի կողմից բարձրացվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 3.0 տոկոսային կետով և տարեվերջում կազմել է 10.75%: Միաժամանակ պետք է արձանագրել, որ տոկոսադրույքների բարձրացման միտումներ գրանցվել են նաև տնտեսության վարկավորման շուկայում:

2022թ-ի վերջում ԱՄՆ դոլարի փոխարժեքը նվազեց 88.02 կետով՝ տարեսկզբի 481.59-ից դառնալով 393.57 ՀՀ դրամ:

ՀՀ բանկային համակարգում տեղի ունեցած իրադարձությունները՝ պայմանավորված տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակի անկայունությամբ, իրենց ազդեցությունը թողեցին Բանկի գործունեության 2022թ-ի արդյունքների վրա:

Անդրադառնալով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքներին՝ անհրաժեշտ է արձանագրել, որ 2022թ-ին Բանկն ապահովել է շուրջ 7.2 մլրդ ՀՀ դրամի չափով զուտ շահույթ՝ 2021թ-ի ցուցանիշի համեմատությամբ նվազելով շուրջ 7.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ի հայտ եկած պատժամիջոցների արդյունքում ոչ տոկոսային եկամուտների (մասնավորապես, արտարժույթի առք ու վաճառքից գոյացած եկամուտների) նվազմամբ:

2022թ-ին շարունակելով ընդլայնել գործընկեր կազմակերպությունների շրջանակը՝ սկսեցինք նոր համագործակցություն մի քանի կարևոր միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ Եվրասիական Զարգացման Բանկի, Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկի, TBC բանկի հետ: Միաժամանակ շարունակել ենք ամրապնդել գործող հարաբերությունները ԿՀԵԲ-ի, ԱՀԲ-ի, “FCI” միջազգային ֆակտորինգային ասոցիացիայի, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի, Green Climate Fund-ի, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի և մեր մյուս գործընկեր կազմակերպությունների հետ:

Հատկանշական է նաև ՀՀ-ում «Կանաչ» ֆինանսավորման ոլորտի զարգացմանն ուղղված “Scaling up green finance practices in Armenia” ծրագրի շրջանակում Բանկի, Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ու ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համագործակցությունը, որում Բանկը դեռևս 2020թ-ից GCF-ի կողմից ընտրվել է որպես Ծրագրի Կառավարիչ: Միջազգային հեղինակավոր խորհրդատվական ընկերությունների անմիջական մասնակցությամբ շահառուների կարողությունների բարձրացման նպատակով 2022թ-ին ևս իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են եղել միջազգային փորձի ուսումնասիրությանը, ՀՀ-ում առկա խնդիրների բացահայտմանը և ոլորտի զարգացմանը:

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձրել ֆինանսական շուկայում բանկերի, վարկային կազմակերպությունների, կենսաթոշակային ակտիվների կառավարիչների, ապահովագրական ու ներդրումային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ հնարավորություն ընձեռելով միջազգային և տեղական շուկաներում ներդրումներ կատարել տարբեր ֆինանսական գործիքներում:

Բանկի խորհրդի, տնօրինության, ղեկավար անձանց և աշխատակիցների ջանքերի ու հաճախորդամետ մոտեցումների շնորհիվ հնարավոր է դարձել պահպանել Բանկի ծառայությունների մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ:

Հաճախորդների հետ մեր ամենօրյա աշխատանքի արդյունքում պարբերաբար վերանայվել է ծառայությունների պայմանները՝ առավելագույնս բավարարելով հաճախորդների պահանջմունքները:

Բանկը մշտապես կարևորում է մասնակցությունը Կորպորատիվ սոցիալական աջակցության ծրագրերին: 2022թ-ի ընթացքում Բանկը ֆինանսավորել է մի շարք բարեգործական հիմնադրամների, որոնք կենսական նշանակության կարևոր խնդիրներ են լուծել և լուծում մեր երկրի համար: Ծրագրերը շարունակական են, և ոգևորող է այն փաստը, որ նման ծրագրերին հանրության ներգրավվածությունը ժամանակի ընթացքում էլ ավելի է ընդլայնվում:

Վստահորեն կարող եմ նշել, որ շարունակելու ենք շարժվել դեպի առաջ՝ կիրառելով անհրաժեշտ ողջ գործիքակազմը մեր հաճախորդներին էլ ավելի հարմարավետ ու որակյալ սպասարկում առաջարկելու նպատակով:

Իմ ու Բանկի անձնակազմի անունից խորին շնորհակալություն եմ հայտնում մեր հաճախորդներին, գործընկերներին, Խորհրդին և Բաժնետերերին՝ Բանկին ցուցաբերած վստահության, աջակցության ու փոխշահավետ համագործակցության համար:

Հարգանքով՝

ԳԵՎՈՐԳ ՄԱՉԱՆՅԱՆ
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

ԲԱՆԿԸ

01 ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

02 ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

03 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ*

Ընդհանուր ցուցանիշները

մլն ՀՀ դրամ



*Բանկի 2022 թվականի անկախ աուդիտն իրականացվել է «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ի կողմից, հետևաբար 2021թ-ի ֆինանսական տվյալների համադրելիությունը պահպանելու համար վերադասակարգված են նշված կազմակերպության կողմից:



Թողարկված պարտատոմսեր



Սեփական կապիտալ



Շահույթ

Այլ ցուցանիշներ



146

Աշխատակիցներ
(միջին տարեկան)

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ





ROA



ROE



Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ (մլն ՀՀ դրամ)



Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ (մլն ՀՀ դրամ)

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

2022թ-ին տեղի են ունեցել Բանկի համար մի շարք կարևոր իրադարձություններ, որոնցից ներկայացնում ենք հիմնականները: Մասնավորապես.

- ՎԶԵԲ-ի տարեկան ժողովի շրջանակում Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) ոլորտում 2022թ-ի ցուցանիշների արդյունքներից ելնելով՝ Բանկը հինգերորդ տարին անընդմեջ արժանացել է **«Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում»** և **«Տարվա առևտրի ֆինանսավորման գործարք»** մրցանակներին:

- Բանկն Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) հետ համագործակցում է Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) շրջանակում և 2022թ-ի սեպտեմբերի դրությամբ սահմանել է 9 մլն ԱՄՆ դոլարի սահմանաչափ: Բանկը 2022թ-ին երկրորդ տարին անընդմեջ արժանացել է Ասիական զարգացման Բանկի կողմից ԱՖԾ մրցանակների՝ **«2022թ-ի Առաջատար գործընկեր-բանկ Հայաստանում»** և «**Լավագույն ՓՄՁ գործարք-Թողարկող Բանկ»**:

2022թ-ին ԱԶԲ-ի հետ համատեղ մշակվել է Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ուղեցույցը:

- ԵՆԲ-ի «Մասնավոր հատվածի ֆինանսավորում ՓՄՁ-ների և միջին կապիտալիզացիայի կազմակերպությունների համար» ծրագրի 3-րդ փուլի շրջանակում շարունակել է իրականացնել գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, զբոսաշրջության, արտահանումը խթանող և արդյունաբերության ոլորտներում գործունեություն ծավալող ընկերություններին ՀՀ դրամով ֆինանսավորում:

- 2022թ.-ին Բանկի և Եվրասիական Զարգացման Բանկի (ԵԱԶԲ) միջև կնքվել է Առևտրի ֆինանսավորման խթանման նպատակով նոր վարկային պայմանագիր՝ 5 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափով: Մասնավորապես տվյալ ռեսուրսի գրավիչ կողմը կայանում է նրանում, որ հնարավորություն է ստեղծվում ծառայություններ մատուցել ՌԴ շուկայի հետ համագործակցող հաճախորդներին և հիմնականում ՌԴ ռուբլով:

- Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկի (ՏՀՄԲ) հետ կնքվել է Ֆինանսավորման գլխավոր համաձայնագրիր 5 մլն եվրո սահմանաչափի շրջանակում:

- Բանկն իրականացրել է առաջին ներմուծման ֆակտորինգի գործարքը TBC բանկի հետ: Այս պրոդուկտի շնորհիվ ընկերությունները կարող են օգտվել ֆակտորինգային ֆինանսավորման սխեմայից նաև ներմուծման գործարքների դեպքում, մասնավորապես՝ ներմուծողը հնարավորություն է ստանում կանխավճարի փոխարեն վճարումն իրականացնել հետաձգման պայմանով, քանի որ արտահանողը ֆինանսավորվում է տեղում՝ ապրանքն առաքելուց անմիջապես հետո:

- Հիփոթեքային վարկավորման շրջանակում Բանկը հաջողությամբ համագործակցում է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ծրագրերի հետ: 2022թ-ին Բանկը միացել է նաև հետևյալ ծրագրերին՝ «Բնակարանային ֆինանսավորում - V» ծրագիր (ԱՀԸ-ի կողմից վերաֆինանսավորվող բնակարանային էներգաարդյունավետ վարկեր) և «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր»:

● Բանկը 2022թ-ին ակտիվացրել է Money Send ծառայությունը, որը MasterCard Worldwide վճարային համակարգի ծառայություն է: Այն հնարավորություն է տալիս Բանկի հաճախորդներին կատարել դրամական փոխանցումներ աշխարհի ցանկացած բանկի կողմից թողարկված Mastercard և Maestro քարտերի միջև, եթե թողարկող բանկի կողմից չկան սահմանված այլ բացառություններ/սահմանափակումներ:

ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Բանկի 2022 թ-ի վարկային գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները.

Վարկային գործիքներ և Վարկային պորտֆել

Տնտեսության վարկավորումը Բանկի ռազմավարական էական բիզնես ուղղությունն է: Վարկավորման ընդհանուր ներդրումների ծավալը 31.12.2022թ-ի դրությամբ կազմել է Բանկի ընդհանուր ակտիվների 32.5%-ը:

Բանկի որդեգրած քաղաքականությամբ պայմանավորված վարկավորման գործունեության մեջ Բանկը շարունակում է նախապատվություն տալ կայուն բիզնես, զարգացման տեսանելի հեռանկարներ, կառավարման որակյալ համակարգ և բարի համբավ ունեցող կորպորատիվ հաճախորդներին: Բանկը պատրաստակամորեն համագործակցում է այն հաճախորդների հետ, ովքեր հետաքրքրված են կամ ակտիվորեն օգտվում են Բանկի կողմից առաջարկվող այլ ծառայություններից:

Բանկը շարունակում է հաճախորդներին առաջարկել վարկային գործիքների լայն փաթեթ.

01
վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, այդ թվում՝ քարտային օվերդրաֆտներ

02
բանկային երաշխիքներ, ակրեդիտիվներ

03
գնման պատվերի ֆինանսավորում, նախաարտահանման և հետարտահանման ֆինանսավորում, ներմուծման ֆինանսավորում, ֆակտորինգ

04
նախագծային ֆինանսավորում, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետ նախագծերի ֆինանսավորում

05
լիզինգային ֆինանսավորում և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ

Հաճախ, ելնելով հաճախորդի անհատական պահանջմունքներից, Բանկը կարող է միաժամանակ համակցել մի քանի վարկային գործիքներ կամ նախապես նախատեսել փոխարինել վարկային մեկ ծառայությունը մյուսով՝ ելնելով նպատակից, ժամկետայնությունից, մարման աղբյուրից և այլն: Նշված գործելաոճի կիրառումը հնարավորություն է ընձեռում հաճախորդին ստանալ առավել ճկուն և մատչելի պայմաններով ֆինանսական լուծումներ:

Բանկի կողմից տնտեսության վարկավորման հիմնական ոլորտներ են հանդիսանում արդյունաբերությունը (սննդի արդյունաբերություն, ձկնաբուծություն, թեթև արդյունաբերություն և այլն), այդ թվում նաև՝ արտահանող արդյունաբերությունը, Էներգետիկան, հատկապես՝ վերականգնվող Էներգիայի ոլորտը, առևտուրը և տուրիզմը:

Բանկը կապիտալ ներդրումների, Էներգաարդյունավետության բարձրացման և/կամ շրջանառու միջոցների համալրման նպատակով առաջարկում է միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման գործիքներ, իսկ առևտրի ֆինանսավորման նպատակով՝ հիմնականում կարճաժամկետ ֆինանսավորման գործիքներ:

Բանկը ՀՀ բանկային համակարգում իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելով զբաղեցրել է 7-րդ հորիզոնականը և 31.12.2022թ-ի դրությամբ իր մասնաբաժինը կազմել է ՀՀ բանկային համակարգի իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի շուրջ 4.6%-ը:

Անհատական վարկային ծառայությունների շրջանակում Բանկը տարեցտարի ակտիվացնում է իր գործունեությունը հիփոթեքային շուկայում՝ հաճախորդներին հետևողականորեն առաջարկելով մրցակցային պայմաններով վարկային գործիքներ:

Վարկային պորտֆելի ֆինանսավորումն իրականացվում է ինչպես Բանկի սեփական ռեսուրսներով, այնպես էլ տեղական և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրած ծրագրային միջոցներով: 31.12.2022թ-ի դրությամբ վարկային պորտֆելի շուրջ 28%-ը կազմել են տեղական ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված ծրագրային միջոցներով ֆինանսավորված վարկերը:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ
(մլրդ ՀՀ դրամ)



2022թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է շուրջ 125 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշի համեմատությամբ գերազանցել է 7.3%-ով, իսկ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 11.7 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 1.7%-ով:

Վարկային պորտֆելի ծավալի և վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան:

ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

(մլրդ ՀՀ դրամ)



Բանկում վարկավորումը զարգացել է հետևյալ հիմնական ուղղություններով*.



* Սույն բաժնում օգտագործված ցուցանիշները ներկայացված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան:

Կորպորատիվ, այդ թվում ՓՄՁ վարկավորում

Այստեղ կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի գերակշիռ մասը, որը 2022թ-ի վերջի դրությամբ կազմել է շուրջ 62.1 մլրդ ՀՀ դրամ[1] կամ ընդհանուր վարկային պորտֆելի 49.7%-ը:

Կորպորատիվ, այդ թվում ՓՄՁ վարկերի պորտֆելում ընդգրկված են խոշոր և ՓՄՁ հաճախորդներին շրջանառու և կապիտալ ներդրումների նպատակով, այդ թվում՝ առևտրի ֆինանսավորման, գյուղատնտեսական (պետական ծրագրերի շրջանակներում) նպատակներով տրված վարկերն ու ֆինանսական վարձակալությունները, վարկային գծերը, օվերդրաֆտները և այլն, բացառությամբ նախագծային ֆինանսավորման շրջանակում տրված վարկերի պորտֆելի (ներկայացված է առանձին բաժնով): Թիրախային հաճախորդներ են համարվում արտադրություն կազմակերպող, այդ թվում՝ ներմուծումը փոխարինող ու արտահանման պոտենցիալ ունեցող հաճախորդները, որոնց համար Բանկն ունի և մշտապես զարգացնում է միջազգային չափանիշներին համապատասխանող բազմաթիվ ծառայություններ:

KfW բանկի վերականգնվող էներգիայի զարգացման ծրագրի շրջանակում շարունակել է իրականացնել իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների արևային կայանների տեղադրման ծրագրերի ՀՀ դրամով ֆինանսավորում:

KfW բանկի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի շրջանակում շարունակել է իրականացնել ՓՄՁ-ների էներգաարդյունավետ ծրագրերի ՀՀ դրամով ֆինանսավորում: Բանկը տվյալ ծրագրի շրջանակում եղել է առաջին ֆինանսական կառույցը, որը ֆինանսավորել է էներգաարդյունավետ բնակելի շենքի շինարարության նախագիծ:

ԵՆԲ-ի «Մասնավոր հատվածի ֆինանսավորում ՓՄՁ-ների և միջին կապիտալիզացիայի կազմակերպությունների համար» ծրագրի 3-րդ փուլի շրջանակում շարունակել է իրականացնել գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, զբոսաշրջության, արտահանումը խթանող և արդյունաբերության ոլորտներում գործունեություն ծավալող ընկերություններին ՀՀ դրամով ֆինանսավորում:

ԱՖԾ ոլորտում Բանկը երկար տարիներ համագործակցում է ՎՀԵԲ-ի, ԱՀԲ-ի հետ, իսկ 2022թ-ից արդեն ԵԱՀԲ-ի հետ՝ 5 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափի շրջանակում և ՏՀՄԲ-ի հետ՝ 5 մլն եվրո սահմանաչափի շրջանակում՝ հաճախորդներին մատուցելով ներմուծման և արտահանման կարճաժամկետ վարկեր, ակրեդիտիվներ, ինկասոներ, միջազգային երաշխիքներ:

1. Այս ցուցանիշում ներկայացված չեն իրավաբանական անձանց դեբիտորական պարտքի ֆինանսավորման և նախաարտահանման ու հետարտահանման վարկերը: Դրանք ընդգրկված են «Առևտրի ֆինանսավորում և ֆակտորինգ» բաժնում:

Նախագծային ֆինանսավորում

Այստեղ կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի այն հատվածը, որն իրենից ներկայացնում է վերականգնվող էներգիայի, շինարարության, գյուղատնտեսության և այլ ոլորտների նոր սկսնակ բիզնես նախագծերի կապիտալ ներդրումների ֆինանսավորում:

2022թ-ին նախագծերի ֆինանսավորման ոլորտում առանձնահատուկ ակտիվ են եղել բնակելի և հասարակական կառուցապատման, ինչպես նաև սեփական կարիքների ու արդյունաբերական բիզնես նպատակով կառուցված արևային ֆոտովոլտային կայանների նախագծերի ֆինանսավորումները:

2022թ-ի վերջի դրությամբ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը կազմել է շուրջ 38.3 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի ավելի քան 30.6%-ը: 2021թ-ի տարեվերջի՝ 32.9 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը 2022թ-ին գրանցել է շուրջ 16.4% աճ:

Բանկը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը Պետության կողմից իրականացվող տնտեսության արդիականացման և գյուղատնտեսության ոլորտի աջակցության ծրագրերին: Մասնավորապես՝ Բանկը ակտիվորեն մասնակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող գյուղատնտեսական հումքի մթերումների, տնտեսության արդիականացման և ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության, ինչպես նաև ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրերին:

2022թ-ի վերջի դրությամբ Բանկը հաջողությամբ իրականացրել է շուրջ 150 հատ՝ ավելի քան 20 մլրդ ՀՀ դրամ ծավալով արևային կայանների կառուցման ծրագրերի ֆինանսավորում, որն իր ծավալներով ՀՀ բանկային համակարգում լավագույն ցուցանիշներից է: Այսպիսի արդյունքներ հնարավոր է եղել գրանցել KfW բանկի Վերականգնվող էներգիայի աջակցության ծրագրի և ԿՀԵԲ հետ կնքված Էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում մատչելի պայմաններով ներգրավված, ինպես նաև Բանկի սեփական ռեսուրսների հաշվին: Նույն ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի սեփական ռեսուրսների հաշվին ֆինանսավորված շինարարական նախագծերի թիվը կազմել է 14՝ շուրջ 10 մլրդ ՀՀ դրամ ծավալով: Բանկը Գերմանահայկական Հիմնադրամի Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար ծրագրի շրջանակում առաջինն է, որ ֆինանսավորել է էներգաարդյունավետ բնակելի շենքի շինարարության նախագիծ և այժմ էլ շարունակում է նման նախագծերի ֆինանսավորումը:

Անհատական վարկավորում

Թիրախային չհամարելով մանրածախ բանկային ծառայությունների շուկան՝ Բանկն առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում հիփոթեքային վարկավորման ոլորտին, որտեղ տարիներ շարունակ արձանագրել է կայուն աճի տեմպեր: Հիփոթեքային վարկավորումն էական նշանակություն ունի Բանկի կողմից ֆինանսավորված շինարարական նախագծերի համար, քանի որ հիփոթեքային վարկերի տրամադրմամբ Բանկն առավել ճկուն և կառավարելի է դարձնում վարկային ռիսկերն ու նախագծերի անխափան իրականացումը: 2022թ-ի վերջի դրությամբ անհատական վարկերի պորտֆելը (ներառյալ սպառողական վարկերը) կազմել է 18.4 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի ավելի քան 14.7%-ը: 2021թ-ի տարեվերջին՝ 17.3 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ հիփոթեքային վարկերի պորտֆելը 2022թ-ին գրանցել է շուրջ 6.4% աճ:

Հիփոթեքային վարկավորման շրջանակում Բանկը հաջողությամբ համագործակցում է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ծրագրերի հետ: Նշված ծրագրերի շրջանակներում ներկայումս գործում են համապատասխանաբար 2 մլրդ և 1 մլրդ ՀՀ դրամ սահմանաչափեր: 2022թ-ին Բանկը միացել է նաև հետևյալ ծրագրերին՝ «Բնակարանային ֆինանսավորում - V» ծրագիր (ԱՀԸ-ի կողմից վերաֆինանսավորվող բնակարանային Էներգաարդյունավետ վարկեր) և «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր»: Նախատեսվում է 2023թ-ին Անհատական Վարկավորման պորտֆելում ավելացնել էներգախնայող շենքերում բնակարանների ձեռք բերման համար տրամադրվող վարկերի ծավալը և քանակը:

Չնայած մասնագիտացված լինելով կորպորատիվ բանկային ծառայությունների շուկայում՝ Բանկը ծառայությունների ամբողջականության ապահովման նպատակով անհատական վարկեր (հիփոթեքային, սպառողական և քարտային) է առաջարկում Բանկի կորպորատիվ հաճախորդների սեփականատերերին, ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին:

Առևտրի ֆինանսավորում և Ֆակտորինգ (արտաքին ու ներքին)

Առևտրի ֆինանսավորումը և Ֆակտորինգը Բանկի վարկային գործունեության կարևոր և հիմնական ուղղություններից են: Բանկն առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի ոլորտում շարունակում է մնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից, և այդ առումով ընթացիկ տարին ևս բացառություն չէր: Այդ մասին են վկայում նաև գործընկեր կազմակերպությունների՝ ՎՀԵԲ-ի, ԱՀԲ-ի և FCI-ի կողմից առևտրի ֆինանսավորման ոլորտում մի քանի տարի անընդմեջ Բանկին շնորհված մրցանակները:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի համար առանցքային նշանակություն ունի արտահանման ֆինանսավորումը:

Առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի ուղղությամբ Բանկն առաջարկում է ներքին ֆակտորինգ և դեբիտորական պարտքի ֆինանսավորում, իսկ համագործակցելով իր գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ (ՎՀԵԲ, ԱՀԲ, ԵԱՀԲ, ՏՀՄԲ, ՀԱԱԳ, Միջազգային ֆակտորինգային ասոցիացիայի անդամ բանկեր) հաճախորդներին

մատուցում է առևտրի ֆինանսավորման միջազգայնորեն ընդունված բոլոր գործիքները, այդ թվում՝ ակրեդիտիվ, ինկասո, միջազգային երաշխիք, հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորում:

Չնայած աշխարհաքաղաքական հանգամանքների արդյունքում դեպի ՀՀ-ի հիմնական առևտրային գործընկեր հանդիսացող ՌԴ արտահանման ֆինանսավորումների էական կրճատմանը, Բանկին հաջողվեց ֆակտորինգային այլ պրոդուկտների խթանման շնորհիվ ընթացիկ տարում պահպանել ֆակտորինգի պորտֆելի և տրամադրումների ցուցանիշները:

2022թ-ի վերջի դրությամբ առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆելը կազմել է 10.3 մլրդ ՀՀ դրամ: Ֆակտորինգի ընդհանուր պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի շուրջ 8.2%-ը: Հաշվի առնելով, ֆակտորինգային գործիքների կարճաժամկետ բնույթը, հետաքրքրական է անդրադառնալ նաև 2022թ-ի ընթացքում տրամադրված ֆինանսավորումների ծավալին, որը կազմել է շուրջ 38.6 մլրդ ՀՀ դրամ:

Ստորև բերված է ֆակտորինգի և առևտրի ֆինանսավորման գործիքների տրամադրումների ծավալների դինամիկան:

ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ

(մլրդ ՀՀ դրամ)



2022թ-ի վերջի դրությամբ նախաարտահանման և հետարտահանման վարկերի պորտֆելը կազմել է շուրջ 6.4 մլրդ ՀՀ դրամ և 2021թ-ի տարեվերջի՝ 6.8 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ նվազել է շուրջ 6%-ով: Այս ուղղությամբ Բանկն ակտիվորեն համագործակցում է ՀԱԱԳ-ի հետ և շարունակում է մնալ նրա ամենաակտիվ գործընկերը ՀՀ բանկային համակարգում:

Ներկայումս Բանկի ֆակտորինգային գործարքներից օգտվում են հիմնականում թեթև արդյունաբերության, ձկնաբուծության, խմիչքների արդյունաբերության, պտուղ-բանջարեղենի վերամշակման և պահածոյացման, բեռնափոխադրումների, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի ընկերությունները:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի ցուցաբերած ակտիվությունը, աշխատակիցների պրոֆեսիոնալիզմն ու այդ ոլորտի գործառնությունների ծավալի աճի պոտենցիալն ապահովել են միջազգային ֆինանսական գործընկերների կողմից Բանկի համար հաստատված սահմանաչափերի տարեցտարի ավելացումը: Միաժամանակ,

Բանկն ակտիվ աշխատանքներ է տանում ֆինանսական նոր գործընկերների ներգրավման ուղղությամբ:

Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածությանն ըստ առանձին արժույթների, աշխարհագրական դիրքի, ճյուղերի ու ոլորտների՝ նվազեցնելով առանձին ճյուղերում վարկերի կենտրոնացումը:

Վարկային պորտֆելի կառուցվածքը՝ ըստ արժույթների 31.12.2022թ-ի դրությամբ:

ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ

(%)



Վերջին երեք տարվա ընթացքում վարկային պորտֆելում գրանցվել է ՀՀ դրամով վարկերի տեսակարար կշռի զգալի աճ, մասնավորապես՝ 2022թ-ի վերջին այն կազմել է 61.0%, մինչդեռ 2021թ-ի և 2020թ-ի համար այն կազմել է համապատասխանաբար 46.9% և 31.7%: Նույն ժամանակահատվածում վարկային պորտֆելում հակառակ միտում է գրանցվել ԱՄՆ դոլարով վարկերի համար, մասնավորապես՝ 2022թ-ին ԱՄՆ դոլարով վարկերը կազմել են 30.1%, իսկ 2021թ-ին և 2020թ-ին՝ համապատասխանաբար 39.6% և 42.4%:

Վարկային պորտֆելի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի.



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ներդրումային գործունեությունը Բանկի ռազմավարական բիզնես ուղղություններից է: Բանկը կատարում է ներդրումներ պետական պարտատոմսերում և կորպորատիվ արժեթղթերում, ինչպես նաև հաճախորդներին առաջարկում է ներդրումային ծառայությունների համալիր փաթեթ:

Արժեթղթերով գործառնություններ և Արժեթղթերի պորտֆել

2022թ-ի վերջի դրությամբ Բանկի արժեթղթերի պորտֆելը անվանական արժեքով, ներառյալ ռեպո համաձայնագրերով գնված ու վաճառված արժեթղթերը, կազմել է 201.7 մլրդ ՀՀ դրամ, իսկ հաշվեկշռային արժեքով՝ 212.2 մլրդ ՀՀ դրամ: Արժեթղթերի պորտֆելը 2021թ-ի վերջի նկատմամբ նվազել է 13.0%-ով:

Արժեթղթերի պորտֆելը կազմել է Բանկի ընդհանուր ակտիվների 55.1%-ը:

Բանկային համակարգում Բանկի արժեթղթերի պորտֆելն իր ծավալով 3-րդն է:

Բանկի արժեթղթերի պորտֆելի ծավալը կրում է տատանողական բնույթ, քանի որ Բանկը, որպես պարտատոմսերի շուկայի ակտիվ մասնակից, իրականացնում է երկրորդային շուկայում արժեթղթերով առքուվաճառքի և դրամական շուկայի գործիքներով (ռեպո, հակադարձ ռեպո գործառնություններ) ակտիվ գործունեություն, որոնք Բանկին ապահովում են զգալի եկամուտներ: Այս մոտեցումն ի սկզբանե բխել է Բանկի ներդրումային գործունեության ոլորտում որդեգրած ռազմավարական նպատակներից և մշտապես իր դրական արդյունքներն է ունեցել ֆինանսական ցուցանիշներում:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼ
(մլրդ ՀՀ դրամ)



2022թ-ի վերջին արժեթղթերի պորտֆելի կազմում շուրջ 97.7%-ը կազմել են պետական պարտատոմսերը, իսկ 2.3%-ը՝ ոչ պետական պարտատոմսերը և ՀՀ ընկերությունների բաժնետոմսերը: Պետական պարտատոմսերի կազմում ընդգրկված են նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված եվրոպարտատոմսերը, որոնց ծավալն անվանական արժեքով 2022թ-ի վերջին կազմել է 43.2 մլն ԱՄՆ դոլար կամ 17.0 մլրդ ՀՀ դրամ: Ընդ որում, 2022թ-ին Բանկը 3.9 մլն ԱՄՆ դոլարով նվազեցրել է ներդրումները եվրոպարտատոմսերում: Բանկը եվրոպարտատոմսերն ակտիվորեն օգտագործում է ՎՃԵԲ-ից մինչև մեկ տարի ժամկետայնությամբ դրամային միջոցների ներգրավման համար ռեպո գործարքներում, որոնց հաշվեկշռային արժեքը 2022թ-ի վերջի դրությամբ կազմել է 10.1 մլրդ ՀՀ դրամ:

Բանկը 2022թ-ին շարունակել է իրականացնել արժեթղթերով առուվաճառքի ակտիվ գործառնություններ, մասնավորապես, գնել է 47,613 մլն ՀՀ դրամի ու վաճառել 43,025 մլն ՀՀ դրամի պետական պարտատոմսեր, ինչպես նաև գնել է 3,979 մլն ՀՀ դրամի և վաճառել 3,560 մլն ՀՀ դրամի կորպորատիվ պարտատոմսեր:

2022թ-ին արժեթղթերի պորտֆելի ընդհանուր միջին տարեկան եկամտաբերությունը (ներառյալ արժեթղթերի վաճառքից ստացված եկամուտը) կազմել է 9.30%, իսկ պետական պարտատոմսերի պորտֆելի համար՝ 9.34%:

2022թ-ին արժեթղթերի պորտֆելից ստացված տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 22.1 մլրդ ՀՀ դրամ կամ Բանկի ընդհանուր տոկոսային եկամուտների 64.1%-ը: Արժեթղթերի պորտֆելից ստացված տոկոսային եկամուտների աճը 2021թ-ի համեմատ կազմել է շուրջ 1%:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

(մլրդ ՀՀ դրամ)



Բանկը մշտապես իրականացնում է պարտատոմսերի ամենօրյա գնանշումներ, որոնք արտացոլվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում, ինչպես նաև Bloomberg և Refinitive համակարգերում բացված Բանկի պաշտոնական էջերում:

Ներդրումային ծառայություններ

Բանկն անընդհատ կատարելագործել և ընդլայնել է իր ներդրումային ծառայությունների փաթեթը և հաճախորդներին ներկայումս առաջարկում է արժեթղթերի բրոքերային, պահառուական, ռեեստրավարման, թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման, արժեթղթերի երկրորդային շուկայի իրացվելիության կազմակերպման, ներդրումային, խորհրդատվական և այլ ծառայություններ՝ հաճախորդների հանդեպ ցուցաբերելով անհատականացված (tailor-made) մոտեցումներ:

2022թ-ին բրոքերային ծառայությունների շրջանակներում հաճախորդների հանձնարարականներով Բանկն իրականացրել է ավելի քան 11.1 մլրդ ՀՀ դրամի արժեթղթերի առքի/վաճառքի գործառնություններ: Օտարերկրյա արժեթղթերով գործառնություններին բաժին է ընկել 2.3 մլրդ ՀՀ դրամ կամ շուրջ 20.7%:

Բանկի միջնորդությամբ դեպոզիտարիայի կողմից մատուցվող ռեեստրավարման և պահառության ծառայությունների շրջանակներում 31.12.2022թ-ի դրությամբ Բանկը վարում է թվով 129 թողարկողի արժեթղթերի ռեեստր, այդ թվում՝ 22 պարտատոմսերի ռեեստր և 205 հաշվետիրոջ պահառուական հաշիվ: 31.12.2022թ-ի դրությամբ Բանկում բացված դեպո հաշիվներում հաշվառվում են հաճախորդների 53.0 մլրդ ՀՀ դրամի արժեթղթեր: Հաճախորդների կողմից պահառության հանձնված արժեթղթերը հիմնականում հանդիսանում են ամերիկյան, եվրոպական, ռուսական ու հայկական պետական և կորպորատիվ արժեթղթեր:

Շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման շրջանակներում 31.12.2022թ-ի դրությամբ Բանկը հանդիսանում է 3 թողարկողների թվով 7 պարտատոմսերի շուկա ստեղծող, որոնց գերակշիռ մասը հանդիսանում են ՀՀ առևտրային բանկերի ու ֆինանսական այլ կազմակերպությունների կողմից թողարկվող պարտատոմսեր:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում կարճաժամկետ դրամական շուկայում և իրացվելիության կառավարման նպատակով շուկայից ներգրավում կամ տեղական ու միջազգային գործընկերներին է տրամադրում կարճաժամկետ ֆինանսավորում՝ օգտագործելով ռեպո, սվոփ գործիքներ, միջբանկային վարկեր և այլն: Բացի այդ, Բանկն ակտիվ գործառնություններ է իրականացնում բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների (վարկային կազմակերպությունների ու ապահովագրական, ներդրումային ընկերությունների) հետ՝ նրանց հնարավորություն ընձեռելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տարբեր ֆինանսական գործիքներում ներդրումներ կատարելու համար:

Արժութային և ոսկով գործառնություններ

Բանկը շարունակել է ակտիվություն ցուցաբերել արտարժութային շուկայում՝ համագործակցելով ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան բանկերի հետ: Բանկը գործարքներ է իրականացնում արտարժութային առևտրի համար նախատեսված էլեկտրոնային հարթակներում (իրական առաքմամբ), ինչը նպաստում է միջբանկային արտարժութային գործառնությունների իրականացման ժամանակ առաջացող ռիսկերի նվազեցմանը: Բանկը միջբանկային և ներբանկային արտարժութային շուկայում հիմնական փոխարկելի արժույթներով իրականացրել է շուրջ 441.8 մլրդ ՀՀ դրամի առք ու վաճառքի, այդ թվում նաև՝ արտարժութային սվոփ գործառնություններ:

Հաշվի առնելով, որ ոսկու ձուլակտորների նկատմամբ պահանջարկն ավելի մեծ էր, քան առաջարկվող ծավալներն էին, վաճառքի ծավալներն ավելի մեծ կարող էին լինել:

Տիեզերք

01 ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

02 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Բանկի կառավարման մարմինները հատուկ ուշադրություն են դարձնում Բանկի բիզնես գործունեության զարգացման ու ընդլայնման համար մատչելի ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը:

Բանկն իր գործունեության շրջանակում օգտվում է միջոցների ներգրավման տարբեր գործիքներից՝ հիմնված դիվերսիֆիկացման սկզբունքների վրա (ըստ արժույթի, ժամկետների, գործիքների, հաճախորդների և այլն):

Միջոցների ներգրավման հիմնական ուղղություններն են.

- իրավաբանական և ֆիզիկական անձանցից ցպահանջ ու ժամկետային ավանդների ընդունում
- միջազգային և տեղական ֆինանսական կազմակերպություններից ծրագրային միջոցների ներգրավում
- սեփական պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման արդյունքում ժամկետային միջոցների հավաքագրում, ինչը թույլ է տալիս Բանկին կրճատել ներգրավված միջոցների ինքնարժեքը և իջեցնել ներգրավված միջոցների վաղաժամկետ վերադարձման ռիսկը՝ ապահովելով նաև պարտապանների դիվերսիֆիկացիա
- ՀՀ միջբանկային շուկայից միջոցների ներգրավում՝ ռեպո գործառնությունների միջոցով

Ավանդների ներգրավում

Ավանդները հանդիսանում են ֆինանսական միջոցների ներգրավման ավանդական գործիք և Բանկն իրավաբանական ու ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է հետևյալ ժամկետային ավանդատեսակները.



Բանկում ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ օրենքով սահմանված չափով:

Ելնելով բիզնես մոդելի առանձնահատկությունից և զանգվածային բանկային ծառայություններ չտրամադրելու Բանկի որդեգրած քաղաքականությունից՝ Բանկը մշտապես սահմանել է ավանդի նվազագույն գումար՝ ՀՀ դրամով ավանդների համար կազմել է 10 մլն ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով և եվրոյով ավանդների համար՝ համապատասխանաբար 20 հազար ԱՄՆ դոլար և 20 հազար եվրո:

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

(մլրդ ՀՀ դրամ)



Համագործակցություն ֆինանսական կազմակերպությունների հետ

Բանկը տարեցտարի խորացնում է տեղական և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը և, որպես արդյունք, նոր և մատչելի վարկային լուծումներ է առաջարկում հաճախորդներին: Միևնույն ժամանակ միջազգային ֆոնդերը տրամադրում են նաև տեխնիկական աջակցություն, ինչը բարձրացնում է Բանկի ներքին կարողությունները:

Ստորև ներկայացնում ենք մեր հիմնական գործընկերներին.

- ՎԶԵԲ-ի հետ համագործակցությունն ունի ավելի քան 13 տարվա պատմություն և ընդգրկում է բավականին լայն շրջանակ. ՓՄՁ վարկավորում, էներգաարդյունավետություն ու վերականգնվող էներգետիկա, առևտրի ֆինանսավորում (TFP): Համագործակցությունն ընդգրկում է նաև «Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի» (GMRA) շրջանակում մինչև մեկ տարի մարման ժամկետով միջոցների ներգրավում: Համագործակցության շրջանակում Բանկը ՎԶԵԲ-ին տրամադրում է նաև կարճաժամկետ ֆինանսավորում:

ՎԶԵԲ-ի և Բանկի միջև Առևտրի ֆինանսավորման ոլորտում ցուցաբերած արդյունավետ ու տարեցտարի զարգացող գործունեության մասին է վկայում նաև ՎԶԵԲ-ի կողմից հինգ տարի անընդմեջ Բանկին՝ **«Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում»** մրցանակի շնորհումը:

2022թ-ին շարունակվել է ՓՄՁ և GCF-GEFF Armenia էներգաարդյունավետության ծրագրերի շրջանակներում ընդհանուր 8 մլն ԱՄՆ դոլար ծավալով ներգրավված միջոցների տեղաբաշխումը: Նշենք նաև, որ ՎԶԵԲ-ը Բանկի համար առևտրի ֆինանսավորման սահմանաչափն ավելացրել է ևս 6.5 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ հասցնելով 28.5 մլն ԱՄՆ դոլարի, որը ներկայումս ՀՀ բանկային համակարգում ամենամեծ սահմանաչափերից մեկն է:

2022թ-ի վերջին ՎԶԵԲ-ի բոլոր ծրագրերով Բանկի ներգրավումների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 58 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

- KfW և Եվրոպական ներդրումային բանկեր, որոնց հետ Բանկի համագործակցությունն իրականացվել է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ պետական հիմնարկի միջոցով: Գերմանահայկական հիմնադրամի հետ համագործակցությունն ունի ավելի քան 15 տարվա պատմություն:

  2021թ-ի ընթացքում Բանկը համագործակցել է KfW բանկի հետ վարկային վերականգնվող էներգիայի զարգացման ծրագրի, Էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի և «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագրի երրորդ փուլի շրջանակում: Վերջինիս միջոցները սպառվել են 2022թ-ի ընթացքում: Բանկի կողմից այս ծրագրերի շրջանակներում ֆինանսավորված նախագծերից շատերը եղել են նախադեպային:

  ԵՆԲ-ի «Մասնավոր հատվածի ֆինանսավորում ՓՄՁ-ների ու միջին կապիտալիզացիայի կազմակերպությունների համար» ծրագրի 3-րդ փուլի շրջանակում Բանկը շարունակել է իրականացնել գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, զբոսաշրջության, արտահանումը խթանող և արդյունաբերության ոլորտներում գործունեություն ծավալող ընկերություններին ՀՀ դրամով ֆինանսավորում:

- ԱԶԲ-ի հետ Բանկը համագործակցում է դեռևս 2015թ-ից՝ առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում: 2022թ-ին ԱԶԲ-ն Բանկի համար առևտրի ֆինանսավորման սահմանաչափն ավելացրել է ևս 4 մլն ԱՄՆ դոլարով՝ հասցնելով 9 մլն ԱՄՆ դոլարի: Բանկը 2022թ-ին երկրորդ տարին անընդմեջ արժանացել է Ասիական զարգացման Բանկի կողմից ԱՖԾ մրցանակների՝ 2021թ. **«Առաջատար գործընկեր-բանկ Հայաստանում»** և **«Լավագույն ՓՄՁ գործարք-Թողարկող Բանկ»**: 2022թ-ին ԱԶԲ-ի հետ համատեղ մշակվել է Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ուղեցույցը:

- 2022թ.-ին Բանկի և Եվրասիական Զարգացման Բանկի (ԵԱԶԲ) միջև կնքվել է Առևտրի ֆինանսավորման խթանման նպատակով նոր վարկային պայմանագիր՝ 5 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափով: Մասնավորապես տվյալ ռեսուրսի գրավիչ

կողմը կայանում է նրանում, որ հնարավորություն է ստեղծվում ծառայություններ մատուցել ՌԴ շուկայի հետ համագործակցող հաճախորդներին և հիմնականում ՌԴ ռուբլով:

- Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկի (ՏՀՄԲ) հետ կնքվել է Ֆինանսավորման գլխավոր համաձայնագիր 5 մլն եվրո սահմանաչափի շրջանակում:

- Բանկն իրականացրել է առաջին ներմուծման ֆակտորինգի գործարքը TBC բանկի հետ: Այս պրոդուկտի շնորհիվ ընկերությունները կարող են օգտվել ֆակտորինգային ֆինանսավորման սխեմայից նաև ներմուծման գործարքների դեպքում, մասնավորապես՝ ներմուծողը հնարավորություն է ստանում կանխավճարի փոխարեն վճարումն իրականացնել հետաձգման պայմանով, քանի որ արտահանողը ֆինանսավորվում է տեղում՝ ապրանքն առաքելուց անմիջապես հետո:

- Վերջին տարիներին «Կանաչ» ֆինանսավորման ոլորտում ակտիվ քաղաքականության շնորհիվ՝ Բանկը 2020թ-ից այդ որորտի զարգացման համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ չափազանց կարևոր և առանձնահատուկ համագործակցություն է սկսել Կանաչ Կլիմայի Հիմնադրամի (GCF) հետ՝ ''Scaling up green finance practices in Armenia" ծրագրի շրջանակում: Բանկը GCF-ի կողմից ընտրվել է որպես ծրագրի համակարգող կառույց: 2020-2022թթ-ի ընթացքում միջազգային հեղինակավոր խորհրդատվական ընկերությունների անմիջական մասնակցությամբ Բանկը շահառուների կարողությունների բարձրացման նպատակով կազմակերպել է միշարք միջոցառումներ, որոնք ուղղված են եղել միջազգային փորձի ուսումնասիրությանը, ՀՀ-ում առկա խնդիրների բացահայտմանը և ոլորտի զարգացմանը: Միջոցառումների արդյունքներն ամփոփվել են մի շարք սեմինար քննարկումներով և մասնակիցների համար կազմակերպվել են դասընթացներ, որոնք վարել են «Կանաչ» ֆինանսավորման ոլորտի միջազգային հարուստ փորձ ունեցող փորձագետները: Այս ծրագիրը ավարտվել է 13.10.22թ-ին:

- Հիփոթեքային վարկավորման շրջանակում Բանկը հաջողությամբ համագործակցում է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ծրագրերի հետ: Նշված ծրագրերի շրջանակներում ներկայումս գործում են համապատասխանաբար 2 մլրդ և 1 մլրդ ՀՀ դրամի սահմանաչափեր: 2022թ-ին Բանկը միացել է նաև հետևյալ ծրագրերին՝ «Բնակարանային ֆինանսավորում - V» ծրագիր (ԱՀԸ-ի կողմից վերաֆինասնավորվող բնակարանային էներգաարդյունավետ վարկեր) և «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր»: Նախատեսվում է 2023թ-ին Անհատական Վարկավորման պորտֆելում ավելացնել էներգախնայող շենքերում բնակարանների ձեռք բերման համար տրամադրվող վարկերի ծավալը և քանակը:

- Բանկը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը Պետության կողմից իրականացվող տնտեսության արդիականացման և գյուղատնտեսության ոլորտի աջակցության ծրագրերին: Մասնավորապես Բանկը ակտիվորեն մասնակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող գյուղատնտեսական հումքի մթերումների, տնտեսության արդիականացման և ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության, ինչպես նաև ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրերին:

Սեփական պարտատոմսերի թողարկում

Հանդիսանալով ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակիցներից՝ Բանկը 2015թ-ից նախաձեռնել է նաև սեփական պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման ծրագրերի իրականացումը:

Բոլոր տեղաբաշխումների արդյունքում Բանկին հաջողվել է հավաքագրել 28 մլրդ ՀՀ դրամի, 51 մլն ԱՄՆ դոլարի և 23 մլն եվրոյի չափով դրամական միջոցներ: 31.12.2022թ-ի դրությամբ արդեն չորս թողարկումները մարված են եղել՝ 10 մլն ԱՄՆ դոլար և 2 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

2022թ-ին Բանկը չի իրականացրել պարտատոմսերի թողարկում: 31.12.2022թ-ի դրությամբ Ֆոնդային բորսայի առևտրային հարթակում Բանկն ունի ցուցակված թվով 15 պարտատոմս: Ընդ որում, 2022թ-ին Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի մարում տեղի չի ունեցել:

Թողարկված բոլոր պարտատոմսերը տեղաբաշխման ավարտից հետո ցուցակվել և շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում: Միաժամանակ, պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով Բանկն օգտվում է շուկա ստեղծողի ծառայություններից, ինչն ապահովել է Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջաններում պարտատոմսերի երկկողմանի գնանշումները: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը շուկայում հանդիսանում են ամենաիրացվելի և ամենապահանջված արժեթղթերից: Մասնավորապես՝ 2022թ-ին Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով Ֆոնդային բորսայում իրականացվել է թվով 33 գործարք՝ 18.8 մլն ՀՀ դրամ, 556.8 հազար ԱՄՆ դոլար և 1 մլն եվրո ծավալով:

Հատկանշական է նաև, որ շուկայում Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերն ունեն բավականին մեծ պահանջարկ, որի մասին են վկայում Ֆոնդային բորսայում պարտատոմսերի գնանշումները:

31.12.2022թ-ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվում Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի 11 թողարկումներ: Մանրամասները ներկայացված են ստորև.

	Թողարկման արժույթ	Տեղաբաշխման ծավալ	Ժամկետայ-նություն	Արժեկտրոնային եկամտաբերություն	Մարման ժամկետ	Անվանական արժեք
2015 ԹՎԱԿԱՆ						
SWISB1	ԱՄՆ դոլար	2,000,000	3 տարի	7.50%	16.04.2018	1,000
SWISB2	ԱՄՆ դոլար	3,000,000	4 տարի	8.00%	16.04.2019	1,000
SWISB3	ԱՄՆ դոլար	5,000,000	5 տարի	8.50%	27.04.2020	1,000
2017 ԹՎԱԿԱՆ						
SWISB4	ԱՄՆ դոլար	10,000,000	7 տարի	6.75%	15.06.2024	100
SWISB5	Եվրո	10,000,000	6 տարի	5.00%	15.06.2023	100
SWISB6	ՀՀ դրամ	2,000,000,000	4 տարի	12.75%	15.06.2021	50,000
2018 ԹՎԱԿԱՆ						
SWISB7	ՀՀ դրամ	3,000,000,000	5 տարի	11.50%	24.05.2023	50,000
SWISB8	ԱՄՆ դոլար	6,000,000	7 տարի	6.50%	23.05.2025	100
SWISB9	ԱՄՆ դոլար	10,000,000	6 տարի	6.00%	22.11.2024	100
2019 ԹՎԱԿԱՆ						
SWISB2A	ԱՄՆ դոլար	5,000,000	6 տարի	6.50%	02.05.2025	100
SWISB2B	Եվրո	3,000,000	4 տարի	4.00%	02.05.2023	100
2020 ԹՎԱԿԱՆ						
SWISBC	ՀՀ դրամ	10,000,000,000	5 տարի	9.00%	01.06.2025	50,000
SWISBD	ԱՄՆ դոլար	10,000,000	6 տարի	6.00%	01.06.2026	100
SWISBE	Եվրո	10,000,000	5 տարի	3.50%	01.06.2025	100
SWISBF	ՀՀ դրամ	10,000,000,000	6 տարի	8.50%	28.09.2026	50,000

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Բանկի կողմից ձևավորված զուտ շահույթը հիմնականում պայմանավորված է տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների աճով, որը Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տարեցտարի ընդլայնման, ակտիվացման և բարելավման արդյունք է:

2022թ-ին Բանկը ձևավորել է շուրջ 7.2 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ՝ 2021թ-ի ցուցանիշի համեմատությամբ նվազել է շուրջ 7.3%-ով, ապահովելով ՀՀ բանկային համակարգի ընդհանուր շահույթի շուրջ 2.6%-ը:

ՇԱՀՈՒՅԹ
(մլն ՀՀ դրամ)



2022թ.-ին Բանկի ROA ցուցանիշը կազմել 2.17%, իսկ ROE ցուցանիշը՝ 9.85%: Համաձայն Արմինֆո գործակալության 23.02.2023թ-ի թիվ 113 տարեկան վերլուծական հաշվետվության ROE շուկայի միջինը կազմում է 22.05%, իսկ ROA շուկայի միջինը՝ 3.50%:

ԲԱՆԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ



ՀՀ բանկային համակարգում Բանկը մշտապես առաջնային դիրք է զբաղեցնում «Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ» և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ» որակական ցուցանիշների մեծությամբ: Այդ առումով 2022թ-ը նույնպես բացառություն չի եղել, և բանկային համակարգում նշված ցուցանիշների գծով Բանկը զբաղեցրել է 2-րդ հորիզոնականը՝ համաձայն «Արմինֆո» գործակալության 23.02.2023թ-ի թիվ 113 տարեկան վերլուծական հաշվետվության: «Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ» և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ» որակական ցուցանիշները 2022թ-ին կազմել են համապատասխանաբար՝ 250.0 մլն և 61.2 մլն ՀՀ դրամ, մինչդեռ ՀՀ բանկային համակարգի միջին ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 89.5 մլն և 24.5 մլն ՀՀ դրամ:

2022թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմում է 50.7 մլրդ ՀՀ դրամ, որը նվազել է 2021թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշի համեմատ 14.2%-ով: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ կապիտալի նվազումը պայմանավորված է վերագնահատման պահուստների նվազմամբ, որն էլ 2023 թվականի 1-ին կիսամյակին գրանցել է էական բարելավումներ:

ԿԱՊԻՏԱԼ
(մլրդ ՀՀ դրամ)



2022թ-ի վերջի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են ավելի քան 385.2 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 3.3%-ով: Ակտիվներում մշտապես գերակշռել են ներդրումներն արժեթղթերում (հիմնականում ՀՀ պետական պարտատոմսերում) և տեղաբաշխված միջոցները վարկային գործիքներում, որոնք հանդիսանում են Բանկի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրները:

ԱԿՏԻՎՆԵՐ
(մլրդ ՀՀ դրամ)



Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնմանը նպաստել են Բանկի պարտավորությունները, որոնց կազմի և կառուցվածքի դիվերսիֆիկացմանն ու ներգրավվող ռեսուրսների ինքնարժեքի նվազեցմանն ուղղված աշխատանքները գտնվել են Բանկի մշտական ուշադրության կենտրոնում: Շարունակաբար քայլեր են ձեռնարկվել տեղական ու միջազգային ֆինանսական կառույցների հետ առկա համագործակցության խորացման և ֆինանսական նոր գործիքներով, այդ թվում նաև՝ պարտատոմսերի թողարկման շնորհիվ, միջոցների ներգրավման ծավալների ավելացման ուղղությամբ:

2022թ-ի վերջին Բանկի պարտավորությունները կազմել են ավելի քան 334.4 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 1.4%-ով:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(մլրդ ՀՀ դրամ)



Ըստ 2022թ-ի հունվարից դեկտեմբեր ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի մեծությունների ցանկի՝ Բանկը վճարել է 3,375 մլն ՀՀ դրամի հարկեր: Բանկը զբաղեցնում է ընդհանուր ցուցակի 83-րդ, իսկ ՀՀ-ում գործող առևտրային բանկերի շրջանակում՝ 8-րդ հորիզոնականը:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

01 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

02 ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Բանկը մշտապես կարևորում է տեխնիկական հագեցվածության և տեղեկատվական կարիքների ապահովման հարցերն ու շարունակական աշխատանքներ է տանում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ՝ ինչպես Բանկի կողմից առաջարկվող ծառայությունները դյուրին դարձնելու, այնպես էլ տեղեկատվական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Բանկը մշտապես կատարելագործում է SS ենթակառուցվածքները՝ ապահովելով տեղեկատվության ամբողջականությունը, ենթակառուցվածքների աշխատանքների անընդհատությունը, ինչպես նաև նոր համակարգերի ժամանակին տեղադրումն ու կիրառումը:

SS ոլորտում Բանկն իր հաճախորդներին առաջարկում է առցանց ծառայությունների գործիքակազմ, ինչպիսիք են՝ «Ինտերնետ-Բանկ», «Մոբայլ բանկինգ» ծառայությունները, և այլ գործիքներ:

Բանկում ներդրված «Ինտերնետ Բանկ» և «Մոբայլ բանկինգ» համակարգերը հնարավորություն են ընձեռում Բանկի հաճախորդներին հեռահար սպասարկվել Բանկում: Ըստ այդմ, հաճախորդների սպասարկման հարմարավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը համագործակցում է ՀՀ-ում գործող հիմնական վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ՝ ակնթարթային դրամային փոխանցումների ոլորտում: Մասնավորապես՝ Բանկը վճարումներ է ընդունում Իդրամ, Իզի Փեյ, Թել-Սել, Մոբիդրամ և ՀայՓոստ վճարային համակարգերի միջոցով, որը թույլ է տալիս անվտանգ օգտվել բանկային ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու:

Հաճախորդների և աշխատակիցների առերես շփումների նվազեցման, ներքին և արտաքին փաստաթղթաշրջանառության օպտիմալացման, ծառայությունների մատուցման ավտոմատացման նպատակով Բանկը 2022թ-ին իրականացրել է մի շարք գործառույթների թվայնացում, մասնավորապես՝ Բանկում ներդրվել են էլեկտրոնային ստորագրության, հաճախորդների նույնականացման, ծառայությունների վերահսկման, անվտանգության բարձրացման և ռիսկերի նվազեցման նպատակով նոր համակարգեր: Բացի այդ, ներդրվել է պլաստիկ քարտերի անհպում վճարումների համակարգ:

Առաջնորդվելով անվտանգության ժամանակակից պահանջներով՝ հատուկ ծրագրային միջոցներով կատարվում է հաճախորդների, նրանց դրամական փոխանցումների մոնիթորինգի և ռիսկերի ավտոմատ գնահատում ու տեղեկացում:

Բանկն անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ներդնելիս առաջնորդվում է միջազգայնորեն ընդունված ստանդարտներով, ինչպես նաև Բանկում ներդրվում և շարունակաբար կատարելագործվում են տեղեկատվական անվտանգությանը վերաբերող ներքին ակտեր:

Հաճախորդներին մատուցվող ծառայությունների անխափան աշխատանքն ապահովելու և Բանկի տվյալների հասանելիությունը բարձրացնելու նպատակով Բանկում և Բանկից դուրս օգտագործվում են սերվերային մի քանի հարթակներ:

SS անվտանգության բարձր մակարդակ ապահովելու նպատակով Բանկը պարբերաբար իրականացնում է SS համակարգերի և ցանցերի ներթափանցման փորձերի թեստավորում միջազգային ամենահայտնի ընկերությունների կողմից:

Օգտագործելով SS ժամանակակից լուծումները՝ Բանկն անդամակցում է մի շարք տեղական, ինչպես նաև միջազգային վճարային և տեղեկատվական համակարգերի, մասնավորապես Reuters (ներկայումս Refinitive) ու Bloomberg, որտեղ Բանկի կողմից գնանշվում են ՀՀ դրամը, հիմնական արտարժույթները, ՀՀ պետական պարտատոմսերը և կորպորատիվ արժեթղթերը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հիմնվելով գործող օրենսդրության պահանջների և միջազգային ու սեփական կուտակած փորձի վրա՝ Բանկն անընդհատ կատարելագործում է ռիսկերի կառավարման համակարգը: Բանկը կիրառում է «Պաշտպանության երեք գծեր» (Three lines of defence) մոդելը, ըստ որի «առաջին գիծը» հանդիսանում է եկամտաստեղծ օղակը: «Երկրորդ գիծը» ներկայացնում են ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման ստորաբաժանումները, որոնք պարբերաբար իրականացնում են ռիսկերի նկատմամբ վերահսկողություն և դրանց վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացնում Բանկի ղեկավարությանը: «Երրորդ գիծը» ներկայացնում է Ներքին աուդիտի ստորաբաժանումը, որն անկախ ու օբյեկտիվ գնահատումներ և հավաստումներ է ներկայացնում Բանկի խորհրդին ու ղեկավարությանն էական ռիսկերի վերաբերյալ:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը մշակում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը, վերահսկողություն է իրականացնում ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունների նկատմամբ և Խորհրդին ու Տնօրինությանը ներկայացնում հաշվետվություն Բանկի գործունեության, սահմանաչափերի և ուշադրություն պահանջող այլ հարցերի վերաբերյալ:

Համապատասխանության ապահովման պատասխանատուն իրականացնում է Բանկի համապատասխանության ռիսկի բացահայտում, կառավարում և մոնիթորինգ, իսկ Ներքին դիտարկումների մարմինը՝ ՓԼԱՖ-ի դեմ պայքարի գործառույթ: Գործառույթի արդյունավետության բարձրացման նպատակով Բանկի կողմից ներդրվել են SWIFT Transactions Screening, World Check և AML Management ծրագրային ապահովումները: ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի գործառույթով զբաղվող Բանկի աշխատակիցները մասնակցել են միջազգային CAMS (Certified AML specialist), ICA (Specialist Certificate Trade Based Money Laundering) և ICA (Certificate KYC and CDD) որակավորման դասընթացներին և հաջողությամբ հանձնել են քննությունները:

Վարկային ռիսկի կառավարման ստորաբաժանումը վարկային վերլուծությունների շրջանակներում իրականացնում է ռիսկերի գնահատումներ, Վարկային կոմիտեի կողմից սահմանված պայմանների վերահսկողություն, տրամադրված վարկային միջոցների հետստուգումներ, ֆինանսական, գործառնական, արտապլանային մոնիթորինգներ և այլ գործառույթներ՝ համաձայն Բանկի ղեկավարության հանձնարարականների:

Խորհրդի կողմից հաստատված երկարաժամկետ ու տարեկան աշխատանքային ծրագրերի համաձայն՝ Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է Բանկի գործունեության առավել ռիսկային ոլորտների աուդիտ: Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքներն առավել արդյունավետ է դարձնում Բանկի Խորհրդի անդամներից ձևավորված աուդիտ կոմիտեն, որը պարբերաբար քննարկում է Ներքին աուդիտի հաշվետվություններն ու ներքին աուդիտի աշխատանքների բարելավմանը վերաբերող հարցերը:

Համակարգի արդյունավետությունն ապահովվում է ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատման ու փաստաթղթավորման առկայության, ինչպես նաև համադրումների կիրառման շնորհիվ: Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Բանկում կիրառվում են մի շարք հիմնարար սկզբունքներ: Դրանք են.

1 Ներդրումային որոշումների ընդունման կոլեգիալ եղանակը, ռիսկերի բացահայտման, վերլուծության և գնահատման համար ռիսկերի կառավարման մոդելների ու տարրերի կիրառումը, աշխատատեղերում իրավասությունների և պարտականությունների տարանջատումը, գործառնությունների իրականացումը առնվազն «երկու անձի» սկզբունքով, ռիսկային գործառնությունների համար սահմանաչափերի որոշումն ու հսկողությունը, ռիսկային ակտիվների դիվերսիֆիկացիան, հնարավոր կորուստների ծածկման համար պահուստների ձևավորումը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց՝ ապահովագրության միջոցով, երբ դրանց նվազեցման օգուտները գերազանցում են գնահատված ծախսերը կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է և այլն:

2 Սթրես-թեստավորման համակարգի կիրառում, որը պարունակում է տարբեր հավանական սցենարներ և գնահատում է իրավիճակների ազդեցությունը Բանկի շահույթի ու հիմնական տնտեսական նորմատիվների վրա:

3 Գործառնական ռիսկի նվազեցման նպատակով ապահովագրության փաթեթի կիրառում, որն իր մեջ ներառում է բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային ու համակարգչային հանցագործության և մասնագիտական պատասխանատվության ուղղությունները: Բանկի կողմից ձեռք է բերվում նաև շենքի և գույքի ապահովագրություն:

Ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողությունը Բանկում իրականացնում են Բանկի խորհուրդը, Գործադիր տնօրենը և կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա ստեղծված կոլեգիալ մարմինները՝ Տնօրինությունը, Վարկային, Գործունեության համապատասխանության հսկման և Ակտիվների ու պասիվների կառավարման կոմիտեները:

ՍԱՐԳԻՍ

01 ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

02 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

03 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

Հաճախորդների սպասարկումը Բանկի կառավարման մարմինների և աշխատակազմի կողմից մշտապես արժանացել է առանձնահատուկ ուշադրության: Տվյալ մոտեցումը համահունչ է Բանկի որդեգրած ռազմավարական արժեքներին, որի նպատակն է ապահովել հաճախորդների ամբողջական բարձրակարգ սպասարկում՝ ցուցաբերելով յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցում:

Ֆինանսավորման ոլորտում Բանկի համար որպես հիմնական թիրախային հաճախորդներ են հանդիսանում այն բիզնես հաճախորդները, որոնք զբաղվում են արտադրական և արտահանմանն ուղղված գործունեությամբ, որոնց ֆինանսավորումը Բանկն իրականացնում է ոչ միայն ավանդական վարկավորման, այլ նաև առևտրի ֆինանսավորման գործիքների միջոցով՝ խթանելով արտադրման ու արտահանման ծավալների ավելացմանը: Վերջին տարիներին Բանկի համար չափազանց կարևոր է դարձել նաև արտադրական վերազինման և տեխնոլոգիական զարգացման, Էներգաարդյունավետ և «կանաչ» ծրագրերի ֆինասավորումը:

31.12.2022թ-ի դրությամբ ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է **3,701**, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ **աճել է շուրջ 8%-ով**:

31.12.2022թ-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար **38% և 62%**:

Բանկը հաճախորդների համար թողարկում և սպասարկում է **MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business** քարտեր: Թեպետ քարտերի թողարկումը և սպասարկումը Բանկի համար չի հանդիսանում ռազմավարական բիզնես ուղղություն, սակայն նշված ծառայությունների մատուցումը պայմանավորված է հաճախորդներին համալիր ծառայությունների ապահովման անհրաժեշտությամբ:

2023թ-ին նախատեսվում է հաճախորդներին առաջարկել պրեմիում դասի **Master Card World Elite** քարտատեսակ, ինչը քարտապանին կտա մի շարք առավելություններ, մասնավորապես՝ **Լաունջ, Կոնսիերժ, Ֆասթ թրեք ծառայություններ**, ինչպես նաև ճամփորդական ապահովագրություն:

2023թ-ին նախատեսվում է հաճախորդներին տրամադրել հնարավորություն սմարթֆոններով օգտվել **Apple Pay և Google Pay** վճարային հավելվածներից, ինչը հնարավորություն կտա ամբողջ աշխարհում կատարել անկանխիկ, արագ և նորարարական վճարումներ և կանխիկացումներ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Բանկը մշտապես առաջնորդվում է «Կորպորատիվ մշակույթում խոսքը գործողությունից չպետք է տարբերվի» կարգախոսով՝ ճիշտ օգտագործելով ժամանակն ու ռեսուրսները և գնահատում թիմի բոլոր աշխատակիցներին: Մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում Բանկը մշտապես ապավինում է առաջադեմ, որակյալ և փորձառու մասնագետների ներգրավման, աշխատակիցների շարունակական վերապատրաստման, ընդհանուր զարգացման, կորպորատիվ մշակույթի տարածման ու առողջ թիմի պահպանման սկզբունքներին և մոտեցումներին:

Բանկն իր աշխատակիցների հետ փոխհարաբերությունները կառուցում է երկարատև համագործակցության և փոխադարձ հարգանքի սկզբունքով:

Գիտակցելով պրոֆեսիոնալ անձնակազմի կարևորությունը՝ Բանկը միշտ հոգացել է նրանց վերապատրաստման, խրախուսման, կարիերայի աճի, պրոֆեսիոնալիզիմի բարձրացման մասին:

Բանկի աշխատակիցներն աչքի են ընկնում հմտություններով, պրոֆեսիոնալիզմով, նախաձեռնություններով և թիմային աշխատանքի ունակություններով: Բանկի բազմաթիվ աշխատակիցներ փորձի ու գիտելիքների փոխանակման նպատակով մասնակցել են ՀՀ տարածքում և դրանից դուրս կազմակերպված ուսումնական տարբեր ծրագրերի, այդ թվում՝ սեմինարների, կոնֆերանսների և միջազգային գործընկեր կազմակերպությունների կողմից կազմակերպվող առցանց դասընթացների:

Տարբեր ուսումնական ծրագրերում գերազանց առաջադիմություն ցուցաբերած բազում աշխատակիցներ մասնակցել են մի շարք արտասահմանյան հեղինակավոր բանկերում և կազմակերպություններում վերապատրաստման ծրագրերի:

Մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով Բանկը մշտապես խրախուսել է աշխատակիցների մասնակցությունը ACCA, CFA և որակավորման բարձրացման միջազգային այլ հայտնի ծրագրերին, որոնց մասնակցության շնորհիվ Բանկի մի շարք աշխատակիցների շնորհվել են ACCA և CFA որակավորումներ:

Կարևորելով Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից զինվորների ինտեգրումը հասարակությունում՝ Բանկը պատերազմի մասնակցած երեք աշխատակից է ընդունել և կազմակերպել նրանց վերապատրաստումը որպես բանկային աշխատող:

2022թ.-ի ընթացքում Բանկը կազմակերպվել է նաև մի շարք փոքր ու մեծ թիմային միջոցառումներ, որոնք հնարավորություն ընձեռեցին, համատեղելով աշխատանքն ու հանգիստը, էլ ավելի մտերմացնել աշխատակիցներին և ամրապնդել աշխատանքային կապերը:

ՄՈՒԿՈՒՉ ՊԱՊՈՅԱՆ
Աշխատակազմի ղեկավար

146
Աշխատակիցների թիվ

62%
Կին աշխատակից

35
Աշխատակիցների միջին տարիք



31.12.2022թ-ի դրությամբ Բանկում աշխատում է 146 աշխատակից: Ընդ որում.

01 բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն

02 3 աշխատակից ունի գիտությունների թեկնածուի և մեկը՝ գիտությունների դոցենտի աստիճան

03 1 աշխատակից ունի CFA միջազգային որակավորում, 4 աշխատակից ստացել է FCI 1-ին մակարդակի որակավորում, 2 աշխատակցի շնորհվել է ACCA հերթական որակավորում

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բանկի և աշխատակազմի համար առօրյա մասնագիտական գործունեությունից բացի առանցքային նշանակություն ունեն նաև սոցիալական պատասխանատվությունը և հասարակական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնությունները:

2022թ-ին շարունակել ենք հանդես գալ բազում սոցիալական և բարեգործական նախաձեռնություններով՝ ուղղված մշակութային, բնապահպանական, կրթական ու սոցիալական աջակցության ծրագրերի իրականացմանը, որոնք ներառել են նվիրատվությունների շարք ՀՀ մշակութային օջախներին, օգնություն կարիքավոր ընտանիքներին, երեխաներին, օժանդակում կրթությանը, ընթերցանությանը և այլն: Մասնավորապես.

Պատերազմի հետևանքով կացարանը կորցրած արցախցիներին օգնելու նպատակով, Բանկն ու Բանկի աշխատակիցները **2021թ-ի սեպտեմբերին միացել են «100 տուն Արցախում» նախագծին**: Նախագծի շրջանակում Բանկի աջակցությամբ կառուցվել է 1 առանձնատուն և անասնագոմ Ստեփանակերտից 16 կմ հեռավորությամբ տեղակայված Ասկերանի Դահրավ գյուղի մոտակայքում: Իսկ արդեն 2022թ-ի հուլիսի 30-ին հանձնվել է շահագործման:

Կարևորելով կրթության դերն ու նշանակությունը՝ Բանկի աշխատակիցները, սեպտեմբերի 1-ին ընդառաջ, նախաձեռնել են աջակցության ծրագիր, որով օգնել են սոցիալապես անապահով **25 ընտանիքի** առաջին դասարան գնացող երեխաներին՝ նվիրելով հագուստ, դպրոցական պայուսակ, կոշիկ, գրենական պիտույքներ:

Մշտապես կարևորելով սոցիալական պատասխանատվության դերն ու նշանակությունը, ավանդույթի համաձայն, Բանկը և աշխատակիցները Երեխաների պաշտպանության օրվա առթիվ այցելել են ՀՀ Շիրակի մարզ՝ համագործակցելով Շիրակի մարզպետարանի հետ և աջակցել **18 անապահով բազմազավակ ընտանիքների**:

Ամանորի տոներին ընդառաջ, Բանկն ու Բանկի աշխատակիցները այս տարի ևս Ամանորյա հեքիաթ-տոն են պարգևել Սյունիքի մարզի՝ սահմանամերձ դարձած Ծավ, Սվարանց, Ներքին Հանդ, Տանձատափ, Շիկահող, Իշխանասար և Ճակատեն գյուղերի շուրջ **120 երեխաներին**, ինչպես նաև տպիչներ և համակարգիչներ հանձնել Գորիսի Խնձորեսկ, Վերիշեն, Ներքին Խնձորեսկ, Հարթաշեն և Քարահունջ համայնքներին:

EY
Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱրմՍվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱրմՍվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի ապրիլի 4-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում:

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՐՑ

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների էականության, այնպես էլ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով:

Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը մեծապես կախված է նախնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճի առկայության գնահատումից: Այդ գնահատումը էապես

կախված է վարկառուի ժամկետանց օրերի ցուցանիշից (ներառյալ այլ ֆինանսական հաստատություններում ժամկետանց օրերը) և վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումից:

Արժեզրկված էական ֆինանսական ակտիվների համար անհատական հիմունքով ԱՎԿ հաշվարկը պահանջում է հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից և այլ աղբյուրներից ապագա դրամական հոսքերի գնահատում:

Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ԱՎԿ էականորեն տարբեր գնահատումների: Սա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ» և Ծանոթագրություն 29-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ԴԻՏԱՐԿՎԵԼ ՄԵՐ ԱՈՒԴԻՏԻ ԸՆԹԱՑՈՒՄ

Աուդիտն իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝

- Պորտֆելային հիմունքով ԱՎԿ որոշելու համար կիրառված վարկային ռիսկի մոդելների և ենթադրությունների վերլուծություն;
- Բանկի՝ վարկային ռիսկի էական աճը բացահայտելու նկատմամբ ներքին հսկողության միջոցների թեստավորում;
- Հաճախորդներին տրված էական արժեզրկված վարկերի և փոխառություններ գծով ԱՎԿ-ի թեստավորում՝անհատական հիմունքով:

Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը, ներառյալ՝ վերանայված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են՝ վարկերի ժամկետանց օրերը, հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը և արժեզրկված վարկերի մնացորդների փոփոխությունը սկզբնական ճանաչման ամսաթվից մինչև դեֆոլտի ամսաթիվը: Մենք նաև թեստավորել ենք վարկային ռիսկի էական աճի բացահայտման գործընթացում առանցքային հսկողության միջոցների նախագծման և գործարկման արդյունավետությունը և գնահատել ենք հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկի էական աճը որոշելու համար ղեկավարության կողմից ընտրված չափանիշների կիրառման հետևողականությունը:

Արժեզրկված էական վարկերի գծով մենք թեստավորել ենք հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից և այլ աղբյուրներից ապագա գնահատված դրամական հոսքերի հաշվարկները:
Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Բանկի՝ վարկային ռիսկին

ենթարկվածությունը նկարագրող ֆինանսական հաշվետվությունների բացահայտումների նկատմամբ:

ԲԱՆԿԻ 2022Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի 2022թ. տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Բանկի 2022թ. տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:
Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են

մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի գործունեության անընդհատության դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, սպառնալիքների վերացմանը անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման նպատակով անցկացված աուդիտի ղեկավար գործընկեր է հանդիսանում Էրիկ Հայրապետյանը:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր Էրիկ Հայրապետյան

Պատասխանատու աուդիտոր Ելենա Ադամյան

2023թ. մայիսի 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

(հազար ՀՀ դրամ)

	2022թ.	2021թ. (վերադասա-կարգված)
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,552,473	27,330,179
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	26,252	35,125
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	7,449,029	2,540,486
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	125,003,048	116,531,510
Ներդրումային արժեթղթեր	133,432,483	153,851,984
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	78,718,547	89,923,037
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	2,020,076	1,637,423
Ոչ նյութական ակտիվներ	82,402	78,693
Բռնագանձված ակտիվներ	1,175,804	1,794,760
Հետաձգված հարկային ակտիվներ	4,178,389	929,187
Այլ ակտիվներ	4,533,679	3,768,054
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ	**385,172,182**	**398,420,438**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	80,803,726	86,526,829
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	29,108	64,242
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	129,536,044	136,066,628
Թողարկված պարտքային արժեթղթեր	52,408,743	58,839,075
Այլ փոխառու միջոցներ	34,778,666	31,964,736
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	186,533	476,439
Այլ պարտավորություններ	2,210,310	1,998,458
Ստորադաս փոխառություններ	34,484,130	23,417,085
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**334,437,260**	**339,353,492**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	10,000,200	10,000,200
Էմիսիոն եկամուտ	6,205,548	6,205,548
Գլխավոր պահուստ	35,000,000	30,000,000
Չբաշխված շահույթ	16,755,005	14,555,290
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	(18,784,599)	(2,828,795)
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	1,558,768	1,134,703
Ընդամենը սեփական կապիտալ	**50,734,922**	**59,066,946**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**385,172,182**	**398,420,438**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Գևորգ Մաչանյան — Գլխավոր գործադիր տնօրեն

Սեդրակ Բաղդասարյան — Գլխավոր հաշվապահ

2023թ. մայիսի 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամ)

	2022թ.	2021թ. (վերադասա-կարգված)
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	33,775,065	33,486,218
Այլ տոկոսային եկամուտ	337,003	205,169
Տոկոսային ծախս	(26,168,283)	(22,788,292)
Զուտ տոկոսային եկամուտ	**7,943,785**	**10,903,095**
Վարկային կորուստների գծով վերակագնում/(ծախս)	3,137,574	(1,614,778)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո	**11,081,359**	**9,288,317**
Միջնորդավճարների գծով եկամուտ	504,994	342,339
Միջնորդավճարների գծով ծախս	(184,766)	(156,816)
Զուտ առևտրային եկամուտ	1,547,990	797,111
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսկան ակտիվների ապաճանաչումից զուտ օգուտ	20,943	1,878,617
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	(927,915)	(310,007)
Այլ եկամուտ	316,966	80,784
Ոչ տոկոսային եկամուտ	**1,278,212**	**2,632,028**
Անձնակազմի գծով ծախսեր	(1,919,187)	(1,569,591)
Հիմնական միջոցների մաշվածություն	(179,770)	(178,166)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(28,373)	(26,498)
Այլ ծախսեր	(634,776)	(737,094)
Այլ արժեզրկման ծախսեր	(667,845)	–
Ոչ տոկոսային ծախսեր	**(3,429,951)**	**(2,511,349)**
Շահույթ մինչև շահութահարկ	**8,929,620**	**9,408,996**
Շահութահարկի գծով ծախս	(1,729,905)	(1,643,537)
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ	**7,199,715**	**7,765,459**

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամ)

	2022թ.	*2021թ.*
ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ	7,199,715	7,765,459
Այլ համապարփակ եկամուտ		
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		
Հիմնական միջոցների վերագնահատում	517,152	–
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	(93,087)	–
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ	**424,065**	**–**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն	(18,932,920)	(14,407,850)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ԱՎԿ պահուստի փոփոխություն	(525,377)	223,951
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	3,502,493	2,553,101
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ վնաս	**(15,955,804)**	**(11,630,798)**
Տարվա այլ համապարփակ վնաս, առանց հարկերի	**(15,531,739)**	**(11,630,798)**
Ընդամենը տարվա այլ համապարփակ վնաս	**(8,332,024)**	**(3,865,339)**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամ)

	Կանոնա-դրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի վերագնա-հատման պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**10,000,200**	**6,205,548**	**25,000,000**	**8,802,003**	**1,134,703**	**11,789,831**	**62,932,285**
Տարվա շահույթ	–	–	–	–	–	7,765,459	**7,765,459**
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	–	–	–	(12,146,863)	–	–	**(12,146,863)**
Զուտ օգուտ վերադասակարգված շահույթում կամ վնասում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից	–	–	–	(2,260,987)	–	–	**(2,260,987)**
Զուտ փոփոխություններ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ԱՎԿ պահուստում	–	–	–	223,951	–	–	**223,951**
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	–	–	–	2,553,101	–	–	**2,553,101**
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	–	–	–	**(11,630,798)**	–	–	**(11,630,798)**
Հատկացումներ պահուստին	–	–	5,000,000	–	–	**(5,000,000)**	–
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	–	–	**5,000,000**	–	–	**(5,000,000)**	–
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,000,200**	**6,205,548**	**30,000,000**	**(2,828,795)**	**1,134,703**	**14,555,290**	**59,066,946**
Տարվա շահույթ	–	–	–	–	–	7,199,715	**7,199,715**
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	–	–	–	(18,849,853)	–	–	**(18,849,853)**
Զուտ օգուտ վերադասակարգված շահույթում կամ վնասում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից	–	–	–	(83,067)	–	–	**(83,067)**
Հիմնական միջոցների վերագնահատում	–	–	–	–	517,152	–	**517,152**
Զուտ փոփոխություններ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ԱՎԿ պահուստում	–	–	–	(525,377)	–	–	**(525,377)**
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	–	–	–	3,502,493	(93,087)	–	**3,409,406**
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	–	–	–	**(15,955,804)**	**424,065**	–	**(15,531,739)**
Հատկացումներ պահուստին	–	–	5,000,000	–	–	**(5,000,000)**	–
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	–	–	**5,000,000**	–	–	**(5,000,000)**	–
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,000,200**	**6,205,548**	**35,000,000**	**(18,784,599)**	**1,558,768**	**16,755,005**	**50,734,922**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար ՀՀ դրամ)

	2022թ.	2021թ. (վերադասա-կարգված)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Շահույթ նախքան հարկումը	8,929,620	9,408,996
Ճշգրտումներ՝		
Ֆինանսական ակտիվների արժեզրկման (վերակազնում)/Ծախս	(3,137,574)	1,614,778
Այլ արժեզրկումներ	667,845	–
Ամորտիզացիայի և մաշվածության գծով պահուստ	208,143	204,664
Ստացման ենթակա տոկոսներ	(677,601)	(1,165,859)
Վճարման ենթակա տոկոսներ	808,288	413,135
Հիմնական միջոցների օտարումից զուտ եկամուտ	(275)	(12,215)
Բռնագաձված ակտիվների օտարումից զուտ (օգուտ)/վնաս	(36,739)	58,778
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	927,915	310,007
Թանկարժեք մետաղների վերագնահատումից զուտ վնաս	109,447	93,481
Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ	(26,262)	(130,687)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**7,772,807**	**10,795,078**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում		
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	(6,034,565)	4,145,618
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(17,665,892)	(2,503,899)
Բռնագանձված ակտիվներ	111,756	345,082
Այլ ակտիվներ	(321,326)	(1,061,699)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)		
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	(3,769,403)	19,124,770
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,429,171	(6,681,430)
Այլ պարտավորություններ	72,269	909,355
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝(օգտագործված) գործառնական գործունեությունում/ գործառնական գործունեությունից, նախքան շահութահարկը	**(17,405,183)**	**25,072,875**
Վճարված շահութահարկ	(1,859,608)	(975,001)
Զուտ դրամական միջոցներ՝ գործառնական գործունեությունից/ (օգտագործված) գործառնական գործունեությունում	**(19,264,791)**	**24,097,874**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերումներ	(63,358,002)	(111,276,767)
Ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից մուտքեր	71,267,487	73,897,656
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով կանխավճարներ	(788,000)	(590,000)
Հիմնական միջոցների ձեռքբերում	(45,271)	(56,167)
Հիմնական միջոցների վաճառք	275	13,792
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(32,082)	(21,995)
Զուտ դրամական միջոցներ՝ ներդրումային գործունեությունից/ (օգտագործված) ներդրումային գործունեությունում	**7,044,407**	**(38,033,481)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Այլ փոխառու միջոցներից մուտքեր	19,042,056	20,059,280
Այլ փոխառու միջոցների մարում	(13,760,849)	(12,605,086)
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	–	(2,000,000)
Ստորադաս փոխառությունից մուտքեր	12,000,000	10,000,000
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(61,885)	(54,624)
Զուտ դրամական միջոցներ ֆինանսավորման գործունեությունից	**17,219,322**	**15,399,570**
Արտրաժույթի փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,765,492)	(1,880,578)
Ակնկալվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(11,152)	–
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**1,222,294**	**(416,615)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	27,330,179	27,746,794
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջում	**28,552,473**	**27,330,179**

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական տարբերակին կարող եք ծանոթանալ՝ այցելելով Բանկի պաշտոնական կայք-էջ՝ **https://www.armswissbank.am/am/reports/**

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ UNION OF BANKS OF ARMENIA СОЮЗ БАНКОВ АРМЕНИИ	Հայաստանի Բանկերի Միություն (ՀԲՄ)
AMX Armenia Securities Exchange	Հայաստանի Ֆոնդային Բորսա
ACRA credit bureau	ԱՔՌԱ Վարկային Բյուրո
ArCa	Արմենիան քարդ (ԱՐՔԱ)
mastercard	Մաստերքարտ
SWIFT	Համաշխարհային միջբանկային ֆինանսական հեռահաղորդակցման ընկերություն
FCI Facilitating Open Account – Receivables Finance	Առաջատար Ֆակտորինգային Կազմակերպությունների Միջազգային Ցանց
AMERICAN CHAMBER OF COMMERCE IN ARMENIA AMCHAM for a better business environment	Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում
EUROPEAN BUSINESS ASSOCIATION EBA	Եվրոպական Բիզնես Ասոցիացիա
SWITZERLAND-ARMENIA Chamber Of Commerce	Շվեյցարիա-Հայաստան Առևտրի պալատ
GAF GERMAN ARMENIAN FUND ԳԵՐՄԱՆԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	«Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ պետական հիմնարկ (ԳՀՀԾԿԳ)
European Bank for Reconstruction and Development	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)

ADB ASIAN DEVELOPMENT BANK	Ասիական Զարգացման Բանկ (ԱԶԲ)
Eurasian Development Bank	Եվրասիական Զարգացման Բանկ (ԵԱԶԲ)
European Investment Bank	Եվրոպական Ներդրումային Բանկ (ԵՆԲ)-միջնորդավորված՝ (ԳՀՀԾԿԳ) հիմնարկի
IBEC International Bank For Economic Co-operation	Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկ (ՏՀՄԲ)
KfW Bank aus Verantwortung	KfW Զարգացման Բանկ – միջնորդավորված՝ (ԳՀՀԾԿԳ) հիմնարկի
GREEN CLIMATE FUND	Կանաչ Կլիմայի Ֆոնդ
R2E2	Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ (ՀՎԷԷՀ)
ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ	Բնակարան երիտասարդներին ՎՎԿ ՓԲԸ
NMC National Mortgage Company	Ազգային Հիփոթեքային Ընկերություն ՎՎԿ ՓԲԸ
EXPORT INSURANCE AGENCY OF ARMENIA	Հայաստանի Արտահանման Ապահովագրական Գործակալություն (ՀԱԱԳ)
FINARM FINANCIAL MARKET MEMBERS ASSOCIATION	«ՖԻՆԱՐՄ» Ֆինանսական Շուկայի Մասնակիցների Ասոցիացիա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվանում՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա թիվ 84
Տրված է՝ ՀՀ ԿԲ կողմից 25.02.2005թ.

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 10
ՀՎՀՀ՝ 02574955
ԿԲ թղթակցային հաշիվ՝ 103002102509

SWIFT կոդ՝ ARSJAM22
Reuters կոդ՝ ARSJ, ARSI
Bloomberg կոդ՝ ASWI

Հեռախոս
(+ 374) 60 757 000
(+ 374) 11 757 000

Էլ-փոստ
info@armswissbank.am

Կայք էջ
www.armswissbank.am
www.armswissbank.com

Սպասարկման ժամեր
9:30-17:00

ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ



ԵՐԵՎԱՆ, 2023